Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4515-4526

281.69
S-16

B 2001

37(=91.99)

ԽՕՍՔ

ԱՍԱՑԵԱԼ Ի Յ. ԳՈՒՐԳԵՆԱՅ

Ի ԿԱՃԱՌԻ

ՎԱՐԱԶԴԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ ՊԱՀՃԷ ԳԱԲՈՒ ԷՍԱՏ ԷՖԷՆՏԻ ԽԱՆ

1875

15

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР

37

ԽՕՍՔ

ԱՍԱՑԵԱԼ Ի Յ. ԳՈՒՐԳԵՆԱՅ

Ի ԿԱՃԱՌԻ

ՎԱՐԱԶԴԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԱԶԴԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՄԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ ՊԱՀՃԷ ԳԱԲՈՒ ԷՍԱՏ ԷՖԷՆՏԻ ԽԱՆ

1875

17499-58

1098Հ

ԱԶԴ

Վարազդատեան ընկերութեան նպատակը լինելով ձրիապէս դասախօսել, ատենաբանել և գիրք կարդացընել ժողովուրդին, մի քանի շաբաթէ հետէ սկսուած է ատենաբանութիւններ ալ լինիլ իւր կեդրոնատեղին (Կ. Պօլիս, Պահճէ գաբու, Բասիմ բաշա խան թիւ 9)։

Մեծ. Ց. Գուրգէն Էֆէնտին՝ որ երրորդ ատենախօսողն եղաւ ընկերութեանս լսարանին մէջ, իւր ատենաբանութիւնը գրաւոր կերպիւ կարդալով, ունկնդիրներէն շատերը փափաք յայտնեցին նորա հրատարակութեանը, որպէս զի կարենան ստանալ զայն։

Գործադիր ժողովս նկատելով նաև որ այդ ատենաբանութիւնը իւր նիւթոյն ընտրութեամբ և գեղեցկութեամբը՝ ոչ միայն մերձաւորաց, այլ և հեռաւոր ազգայնոց իսկ ուշադրութեանն արժանի է, պատշաճ համարեց ունկնդրաց խնդրանացը համեմատ ի տիպ արձանացընել զայն և տալ ի սփիւռս համայն հայաբնակ քաղաքաց, ձրիապէս յղելով գաւառաց ազգային վարժարաններուն։

Ընկերութիւնը կը յուսայ այսու մի օգտակար ծառայութիւն մատուցած լինել Ազգին, որ շատ իսկ կարօտ է արդէն ուսման և դաստիարակութեան նկատմամբ ճառեր լսելու, մանաւանդ թէ այդ մասին ընկերութեամբ եղած ջանքեր տեսնելու։

1875 Մարտ 26
Կ. Պօլիս Բասիմ բաշա խան

Ի դիմաց գործադիր ժողովոյ
Վարազդատեան ընկերութեան

Ատենադպիր
Վ. ՓԹԹԵԱՆ

Ատենապետ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ԽՕՍՔ

ԱՄԱՑԵԱԼ Ի Ց· ԳՈՒՐԳԵՆԱՑ

Ի ԿԱՃԱՌԻ

ՎԱՐԱԶԴԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԳՊՐՈՑ

Որպէս արեգակն է աղբիւր լուսոյ աշխարհի, այնպէս դպրոցք են ակունք լուսաւորութեան ազգաց։

Ժողովրդոց բախտը մանկանց դաստիարակութենէն կախումն ունի։

Տեա՛ր,

Ոչ եթէ նորագիւտ կամ նորալուր ճշմարտութեան մը քարոզ կը հանդիսանամ այսօր առաջի պատկառելի ակրմբիս, ոչ եթէ նոր յաղթանակ մ՚ընձեռեալ պիտի փորձեմ իմ առաջարկութեանս, որ արդէն իմաստուն մտաց Նիւթ եղած և ճարտարախօս բերաններէ հզօրապէս պաշտպանեալ՝ բազմահանդէս յաղթանակներ տարած է ի սիրուս ազգաց ազգաց, ո՛չ, այս չպիտի լինի իմ յանդգնութիւնս, և չէր իսկ հնար· այլ լոկ քանի մը մտածումներ՝ զորս օգտակար և կարեւոր կը համարիմ ի յառաջադիմութիւն ազգիս, յանդիման պիտի առնեմ ձեզ համառօտիւ։ Կը խորհիմ որ թերեւս՝ քանի ինչ հարկաւոր ճշմարտութեանց արձագանք լինելով առ մերազնեայս՝ յաջողիմ փոքրիկ սպասա-

ւորութիւն մը մատուցանել դժբախտ ազգիս ի շինութիւն · վասն որոյ կը խնդրեմ ի ձէնջ, տեարք, զի հաճիք ձեր խորին բայց ներողամիտ մտադրութիւնը չնորհել ինձ այսօր ։

Երբ ազգաց և ժողովրդոց պատմական անցից իրողութիւնքն ողջախոհ դատողութեանց ի քննին կ'ելնեն, երբ այլ և այլ դարուց և ժամանակաց մէջ այս կամ այն ազգին անկման կամ բարձրացման պարագայք, այլովքն հանդերձ, ձեռնհաս քննադատութեանց նիւթ կը լինին, ժողովրդոց բախտին նկատմամբ պատմական անհերքելի ստոյգ ճշմարտութիւն մ'ի յայտ կուգայ բացերեւ · դիտէ՞ք ինչ · — ԱԶԳԻ ՄԸ ՆԻԹԱԿԱՆ ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄՆ՝ ՆՈՐԱ ՄՏԱՒՈՐ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԷՆ ԿԱԽՈՒՄՆ ՈՒՆԻ · այսինքն թէ ըստ առաւելուլ մտաւորական ուժոյն, կ'առաւելու և նիւթեղէն զօրութիւնն ։

Թէ ո՛րքան ստուգութիւն կրնայ ընծայել ողջամիտ ոք սոյն տիեզերական ճշմարտութեան, որ բազմաթիւ դարերու ծոցէն դուրս կ'ելնէ մերկապարանոց, և պատմաբանական զօրեղ փաստերով ապացուցեալ՝ արեւու պէս պայծառ ու յայտնի կը փայլի մեր աչաց, թո՛ղ ցոյց տայ մեզ հինն Եգիպտոս, մեծն Յունաստան և պանծալի աշխարհն Իտալացւոց, երեքին հոյակապ դպրոցքս հասարակաց լուսաւորութեան · թո՛ղ խօսի մեզ վաղեմի դաստիարակն աշխարհիս, նախնագոյն զօրականն լուսաւորութեան՝ Ազգն Եգիպտական՝ իւր հրաշակերտ մեծագործութեանց խորէն · մարդկային ազգին արդի զարմանալի յառաջադիմութեան արշալոյսն Յեգիպտոս ծագեցաւ, ա՛նդուստ թող բարբառի մեզ ոգին աշխատասիրութեան և ժրաջանութեան, անդստին իսկ յորրանէ քաղաքակրթութեան թո՛ղ պատմին առ մեզ յաղթանակք լուսոյ ։ Այլ թող զայդ · անցի՛ր պահ մը Միջերկրականին կոհակները, թեւակոխէ հասիր ի Պեղոպոնես, և անտի ի փառապանծն Եղլադա · անդ ընդ առաջ պիտի ելնեն քեզ զարմանալիք քաղաքակրթութեան, ա՛նդուստ վկայ քեզ ազանց ազին՝ աննման Հելլենաց՝ յառաջադիմութեան դիւցազնական ոգին, շուրջ պատեալ ի զգօն իմաստասիրաց, ի ճարտարաց գեղեցիկ արուեստից, մեծագործութեանց, մարդավար հաւատորութեան և հոգետաւիղն բանաստեղծութեան · ևս և յընտիր ընտիր քաղաքացեաց և հայրենասէր զօրականաց ։ Եւ թող իսկ զայդ · դարձո՛ւր դամ մի աչքերդ յայնկոյս Ադրիական ծփանաց՝ այդ ջինջ

երկնից տակ իտալական պանծալի Երկրին վրայ · անդ յանդիման պիտի տեսնես պետութեանց Պետութեան՝ հռովմէականին՝ յառաջադիմական զարմանագործ նշխարքը, զտիեղերս երբեմն ի բռին ունող այդ դերապանծ ժողովրդեան հայրենիքը, մարդկային հանդերձեալ գերագոյն կատարելութեան այդ մեծարոյ խանձարուրքը · տես, որպիսի՛ վեհութիւն ա՛րդ եւս կը փայլի իւր նշմարաց վրայ · լսէ, ի՛նչեր կը մեկնէ Տիբեր իւր սրտմտեալ ծոցէն, որպիսի՛ ոմանք կը նշմարին հեռաւոր մթութեան մը մշուշին մէջ · փայլակներ լինին թերեւս, որ կը ճառագայթեն յիշողութեան · դա՛ աւադիկ իմաստուն ատենակալք, քաջարուեստ պետեալք, պերճարան հռետորք և զօրականք քաջագօտիք ընդ աշխարհաշէն քաղաքացիս՝ մի զկնի միոյ ի վեր կ'երեւին հռովմէական այդ փառապանծ յիշատակարանէն · ահա Կիկերոն բոցաշունչ ճարտարախօսութեամբ երկրին գաղանական բռնապետութիւնները կը խորտակէ, և արդարութեան դրօշը դատաստանական ատենից մէջ կը պարզէ համարձակ, զվերրէս յայտուշ կը կրթէ և զկատիլինա կը շանթահարէ ։ Ահա Վիրգիլիոս, հոյակապն ի պէտս, բանաստեղծական աշխուժիւ յաստարէզ երկրագործութեան կը սաւառնի, և իւր երկնային հանճարն յօդուտ երկրին ի վար արկանելով՝ հողը գործելու արուեստը կը քաղցրացընէ ժողովրդեան ։ Որատիոս իւր երգիծանիչ տաղերովն ժամանակին մոլութիւններն և բարուց զեղծումները կը ճաղկէ հզօրապէս, և իւր հայրենակցաց մէջ վայելուչ և կիրթ ճաշակի գաղափարը կը զարթուցանէ գրօսուցիկ եղանակաւ ։ Տիբուղդոս և Պրոպերտիոս վառ ի վառ երգերով խաղաղութիւն և բարեբաստութիւն կը յարդարեն ժողովրդեան Հռովմայ · կ'երջանկանայ Իտալիա, և աշխարհի ճոխութիւնքն յինքն կը դրաւէ · իրաւամբ կը պարծենայ և քաղաքաց քաղաքն Հռովմ, և, զաշխարհ սասանեցնելու մեծութեան հետ, զաշխարհ զարմացնելու փառքն ալ կ'ստանայ ։

Իսկ եթէ զայս ամենայն բաւական չհամարիմք յայտագրութիւն այն մեծ ճշմարտութեան՝ թէ Ազգի մը բարոյական և մտաւոր արժանիքէն կախեալ է և նորա նիւթական մեծութիւնը, ահա քիչ մը հեռու, դրեթէ մեր աչաց առջեւ, ի տես կու գայ լուսաւորեալն Եւրոպա իւր ամբաւ պերճութեամբքն · քիչ մ'ալ անդին իմաստունն Ամերիկա իւր արագ արագ բարգաւաճմամբքն

և՛ յուսմունս և՛ ի դիտութիւնս և՛ յարուեստս և՛ ի վաճառաշահութիւն։ Զէ՞ք տեսներ, եւրոպական նաւերու բաղմութիւնն Ատլանտեան և Հնդկաց անդունդները պատառելով կը սլանան կ՚անցնին յԱրեւելս, և երկրին ճոխութիւնքն ու ոսկին յինքեանս աղխաղխեալ կը բերեն քաղաքակրթելոց, որպէս զի եւս քան զևս արգասաւոր գործեն նոքա զաշխարհ։ արեւելեայց զարմանքը, որպէս նաև առատութիւնքը, կը գրաւեն։ Զէ՞ք դիտեր, բնութեան ծոցէն ի՛նչեր կը հանեն ի լոյս հողեղէն արարածք։ ահա հեռադրական թելերն՝ իբրեւ սարդի ոստայն՝ զաշխարհօք կը պատեն։ շոգին, գոգցես նոր արարչի մը շունչը, կենդանութիւն և զօրութիւն կուտայ քրէական մետաղաց, ալ ամենէն պինդ երկաթին կոչտ կտորը՝ մետաքսեայ ալնիւ բեհեղներ կը գործէ, անհեղեղ խստաքարի մը բեկորը մարդկեղէն հանճարոյ մանրածնունդ նրբութիւնն յինքեան կը ցոլացնէ, կճեայ լերինք ճարտարութեանց հրաշակերտ կը դառնան։ Ահա ո՛րպէս մարդկային հանճարը դիւրութիւններ կը հայթայթէ մեծամեծ իրաց։ հմուտ և կորովի գլխոյ մ՚ի խորհուրդ՝ Միջերկրականին ջուրերը Կարմիր ծովու կոհակաց հետ կը խառնուին, և, հասարակաց տուրեւառիկ փոփոխմանց համար, վաճառաբարձ նաւուց երթեւեկութեան ճանապարհը կը կարճնայ և կ՚ապահովի։ երկաթուղեաց գիծերն՝ նման ամուսնաձիգ որթոց մ՚ընձիւղներուն՝ ընդ ամենայն կողմանս կը տարածին, լերանց կարծրագոյն խաւերու մէջէն, անկոխ առապարներու և անդնդական վիհերու վրայէն արձակ ու սրարշաւ անցուդարձ կը յօրինեն մարդկային ամբոխից։ քաղաքակրթութեան երակնե՞րն են արդեօք, որ ընդ բնաւս կը ձգուին և կ՚ածին։ Եւ ո՞ւր թողումք մտաց կորովոյ և քաջասրտութեան անպատում հրաշալիքն։ երկրագնդէս անհնարին հեռաւորութեամբ ի բաց՝ տիեզերաց անեղր միջոցին մէջ թաւալող դունդերն մահկանացու մտաց տեղի կուտան, մարդկեղէն խորհրդոց նաւարկելի կը լինի այլ եւս երկնից այդ անհուն ովկիանը։ Կոպեռնիկոս, հին պտղոմեան դրութեան մեծանուն յեղափոխիչը, ամբաւութեան ձեռքէն գաղտնիք մ՚ալ կը յափշտակէ, փոքրիկ գանկ մ՚ամբաւ մեծութեամբ դունդեր կ՚ըմբռնէ և մեզ հաշիւ կը բերէ։ միւս կողմանէ նոր աշխարհներ կը ծանօթացնեն մեզ երկոքին արիասիրտ ծովաշուք, այլուստ հիւսիսախոյզ բեւեռանդիր արշաւք՝ բնութեան աքան-

չելիքը կը պատմեն աշխարհի, այլ ումն անծանօթ գաւառներու և անծանօթ ժողովրդոց բարքն ու սովորոյթքը կը մատենագրէ, և այլք քաղաքակրթական յաղթանակօք ազատութեան և լուսաւորութեան դաղափարը կը տանին կը հաստատեն մինչ ի խորին խորս խաւարամած երկիրներու։ Այլ հնա՞ր է մեզ ատ զանց առնել զգեղեցիկ արուեստիւք և զոսկեղէն դպրութեամբք նորոց ազգաց։ ահաւասիկ ուր ուրեմն լուսաւորութեան արեգակն պայծառ ի կէտ երկնից կ՚ամբառնայ տակաւ յԵւրոպա և այլուր։ ճարտարապետութեան, քանդակագործութեան, նկարչութեան և երաժշտութեան և բանաստեղծութեան ճարտարութիւնքն ի կատարելութիւն կը յանդին։ բնութիւնն իւր զարմանահրաշ գաղտնեաց վարագոյրը կը բանայ գամ քան զգամ գործունէից առջեւ։ ո՞ դիտէ, տակաւին ի՛նչեր պիտի պարգեւէ յաջորդ դարերու մէջ իւր աշխատասէր զաւակաց։ հասո՞ծ է արդեօք քաղաքակրթութեան ոսկեղինիկ ժամանակը։ — ի՞նչպէս չտարակուսիմք, ուր մարդկեղէն հանճարն համայն գոգցես տարրեղէն նիւթ կ՚զգենու, մտածութիւնք կ՚անձնաւորին, խորհուրդք կը մարմնանան։ քանի մը քայլ մնացած է թերեւս, քանի մը քայլ, և ամենայն ինչ կատարեալ պիտի լինի։ . . . . . .

. . . . . :

Երանի՛ ազգաց՝ որ դիտեն յառաջադիմել . . . . . .

. . . . . :

Բայց տակաւին չա՛տ խիստ շատ փառաւոր հաստատութիւնք գոն մեր աչաց յանդիման, բաղում վկայք կ՚ելնեն ի հանդէս ի ճշդրտել մեզ և երեւցնել ակն յանդիման՝ թէ չէ՛ և չէ մարթ ազգի մը զօրանալ նիւթապէս, մինչ չճոխանայ մտաւորապէս։ զի ապաքէն հնարաւոր բայց երկար կը լինէր, եթէ հին ազգաց ոմանց, զոր օրինակ Ցունաց և Հռովմայեցւոց, քաղաքակրթական կացութեան անկման մասին ալ պատճառաբանական ընդհանուր տեսութիւն մ՚ընէի, և այնպէս ի հակառակէն եւս։ — թէպէտ ի տխուր ճանապարհաց։ — բերէի ընծայեցնէի ձեզ զստուգութիւն ճշմարտութեանս։ պիտի ցոյց տայի յայնժամ՝ թէ ամէն ժամանակ նսեմացեր է անվրէպ այն ազգին աստղն, որ այլ եւս դատարկապորտ զեղխելոց, յուլից և անձնդիւր խուժանի մը լուսատու պիտի լինէր։ Դարձեալ։ կարելի էր, եթէ չխիթայի տաղտուկ պատճառելէ ալնիւ ունկնդրացս, իմաստասիրաբար

ապացուցութեամբ հաստատել ինչ որ՝ դուցէ՝ տակաւին չէ լուսաբանուած · կը ցանկայի յայտնապէս եզրակացնել՝ թէ առանց շարժման չիք կենդանութիւն, և զօրութիւն՝ առանց աշխատասէր կամաց: Եւ արդ, մինչդեռ այսպէս փառաւորապէս, նման լուսաւորին որ ջինջ ու պայծառ երկնի վրայ շողայ, տիեզերական ճըշմարտութիւնն ի թեւս լուսաթեւս կը ժպտի մեր աչաց, ժամանակը չէ՞, զի անցնիւր ոք հարցաքննէ իւրովի՝ թէ ուստի՛ են այս ամենայն, ուստի՛ կը բղխեն բարեբաստութիւնք ժողովրդոց, առ խմէ՛ արդեօք կուգան կը հասնին այն ամենայն յաջողութիւնք և երանութիւնք, առ ի՛նչ արդեօք կը լուսաւորի կը պայծառանայ ժողովրդեան մ'ասաղն, և թէ յումմէ՛ կը ծագի արշալոյսն քաղաքակրթութեան ի խաւարչուտս և ի տուերս · — ո՞չ ապաքէն, տեարք իմ, այն խոնարհ յարկերէն զոր դպրոց կ'անուանեմք: Որչափ ճշմարիտ է՝ թէ ազգ մը մտաւոր և բարոյական զարգացմամբ ևեթ կը զօրանայ նիւթապէս, նոյնչափ ստոյգ է՝ թէ մտաւորին և բարոյականին դայեակը դպրոցն է, դպրոցն է ակն լուսաւորութեան ազգաց, դպրոցք են խանձարուրք և որորանք քաղաքակրթութեան ազանց: Ըստ յառաջադոյն՝ թէ ժողովրդոց բախտը մանկանց կրթութենէն կախեալ է · այսպէս չէ՞ այժմ, տեարք, ո՛յք ամանք կ'ուսանին դպրոցաց մէջ, ո՞չ ապաքէն նորատի սերունդք ազգի մարդկան: Ազգք՝ որ կամեցան հրահանգել զիւրեանց սերունդն յո՛ և է նպատակ, յո՛ և իցէ գործ, ո՞չ միթէ որում կը բաղձային՝ վայելեցին անխալ: Աստանօր թո՛յլ տուք ինձ, տեարք, վայրկ մի յետս անդրէն դարձուցանել զուշն ձեր ներողամիտ, և տալ հայել ձեզ ի ջանս և յարգասիս կրթութեան վաղեմի ազգաց, զորոց խուն ինչ յառաջ կը ճառէի ա՛յնչափ զմայլանօք:

Ահա Եգիպտացիք, բազմադարեան հնութեան մը ժիրաժիր զաւակներն, ո՛րչափ մեծ հոգ ունէին մանկանց կրթութեան · որպէս զի ուժեղ, կորովի և յաղթանդամ պատրաստեն զնոսա, ի տղայ տիոց կը վարժեցնէին բոկոտն գնալ, թեթեւ հագուստ մ'զգենուլ և խոտեղէն ու ընդեղէն միայն ուտել · գօտէկուռ, հետիոտն ընթանալ, ձիընթացի վարժ և կառարշաւ, այսոքիկ հարկաւոր կրթութիւնք էին առ նոսա · ևս և կ'զգուշանային մեծապէս, զի տղայք մարմնոյ և մտաց թուլացուցիչ իրերու չպարապին ամենեւին: Ամենեւին արգիլեալ էր մանկանց թոյլ երաժ-

ժըշտութիւն · պատերազմականը միայն կ'ուսուցանէին մեծաւ փութով, որպէս զի նոցա մանկական փափուկ զգայութիւնքն վառին և զօրանան:

Եւ այսպիսեաւ կը յաջողէին Եգիպտացիք պնդակազմ և քաջամարտիկ յարդարել իւրեանց սերունդը: Երոդոտոս, Հայր պատմաբանից ի Յոյնս, կը պատմէ՝ թէ յԵգիպտոս, ժամանակէն իբր երեք հարիւր տարի յառաջ կատարուած պարսկական պատերազմի մը դաշտին մէջ, ոսկերաց խառն խաղաղակոյտ մը տեսեր է, յորում պարսից զօրաց գանկերն, կ'ըսէ, դիւրաբեկ դիւրափըշրելի էին · իսկ եգիպտական զօրականացը՝ ամուր և կարծրակեղեւ: Յոյնք, աշակերտք Եգիպտացւոց բայց դեր ի վերոյ քան զդաստիարակս իւրեանց, եւս առաւել խնամք կը տածէին տղայոց վարժութեան, թէ՛ ի ռազմ, թէ՛ ի գիտութիւնս, թէ՛ ի հռետորութիւն, ևս և յգգօնն իմաստասիրութիւն · Լիկուրկոս և Սողոն, երկուքին մեծ օրէնսդիրք, խիստ շատ հոգ ունեցան և յատուկ օրէնքներ սահմանեցին ի դաստիարակութիւն մանկանց · Աթէնք, պայծառ հնոցն լուսաւորութեան, վեհափառ օթեվանն ոգւոյն աշխատասիրութեան, ի մեծ զարմացումն տիեզերաց՝ բազմաթիւ դարեր հետզհետէ ի հանդէս կը հանէր զիւր չքնաղ անձինքը · և մինչդեռ ասիական և ափրիկեան պետութիւնք մի զհետ միոյ յաւեր և կործանումն կը մտնէին, Յունաստան տակաւ կ'ամբառնայր ի գագաթնակէտն քաղաքակրթութեան · զիւր կորովի ճետերն ի ռազմ ի խաղս կրթելով՝ Մարաթոնի դիւցազունքն և Թերմոպիլէի հայրենասէրքը կը յարդարէր, մինչ Դարեհ՝ բիւրուց բիւրուքն հանդերձ՝ կը զարհուրէր ամօթալից, և Քսերքսէս սարսափահար և մազապուրծ ի փախուստ կը դառնայր: Հռովմէացիք, հզօր և ազնիւ սերունդ ազգի մարդկան, ըստ ամենայնի մեծ խնամք ունէին իւրեանց մատաղ սերնդին դաստիարակութեան · հռովմէական արծիւն, որ ընդ բնաւս կը սաւառնէր և տիեզերական յաղթանակօք զիւր բոյնն՝ զՀռովմ՝ կը մեծացնէր, ո՞չ ապաքէն մանկանց կրթութենէն կ'առնոյր ճարակ և զօրութիւն · Հռովմայ քաջայաղթ բանակներն, որ ծանօթ էին արեւելեայց, նա մանաւանդ՝ խժդուժ Ոստրոգոթաց և վայրենաբարոյ Հոնաց, ոչ եթէ յախուռն և առանց ինչ վարժութեան, այլ յատուկ մարտուսոյց կրթարաններու մէջ կը վարժէին ի զէն և ի կռիւ, և այնպէս ճարտար ռազմագիտութեամբ ի մարտ կը

խաղային. երկրագործութիւնն, յորմէ ընդ երկար Դեմետրի մարդադարման պարգեւօքն ծածկեցան արտօրայք Իտալիոյ և բիւրաւոր ժողովրդոց հաց ջամբեցին առատութեամբ, ո՞չ միթէ դպրոցներէ կ'ընդունէր բահ ու բրիչ և աշխատաւոր. ուստի՞ էին դարձեալ այն նշանաւոր անձինքն՝ որոց յիշատակն ի զարմացման ունէր զմեզ սակաւ ինչ յառաջ, ո՞չ ապաքէն դպրոցական յարկերէ ի հանդէս կ'ելնէին: Ահա ո՛րպէս, տեարք, մանկանց կրթութենէն կախումն ունի ժողովրդոց բախտը: Նոյն իսկ արդի քաղաքակրթեալ ազգինք, որոց զարմանագործ յառաջադիմութեանց պատմութիւնն անշուշտ բարի նախանձ մը թողուց ի մեզ, ո՞չ միթէ ամենազգի բարօրութիւն դպրոցներով կը վայելեն: Ահա, տեարք, ո՛րպէս դպրոցք են ակունք լուսաւորութեան ազգաց: —

Եւ յետ այսքան ապանց և ժողովրդոց փառաւոր յիշատակաց, կը յօժարիք ապաքէն, տեարք իմ, զի ձեր հայեցուածքն և խորին ուշը դարձնեմ այլ եւս յազգն մեր չուառ, որ դոդցես հրաւէր կը կարդայ հեծեծագին մեր հայրենասիրական զգացմանց:

Որպէս կը հաւատամ, շրջահայեաց և կորովի տեսութիւն մը բաւական պիտի լինի մեզ՝ յայտ յանդիման ունենալու ազգին արդի հանրական կենաց պատկերը:

Կը տեսնեմ ես զազգն մեր, տեարք, իբր երեքհարիւր և յիսուն բիւր թուով ժողովուրդ, ընդ կողմանս կողմանս աշխարհի ցրուեալ և վտարանդի, պետական կորուսեալ փառաց և աւերակ բնագաւառի մը տէր, այլակրօն և օտարալեզու պետութեանց վաղեմի հպատակ, կրօնական պառակտմամբ ի ծուէնս ծուէնս պատառեալ եկեղեցական դրօշի մ'ապատան և ակնկալու. — այլ ոչ առհասարակ որպէս պարտ էր լինել՝ ա՛յնպէս ակնկալու. զոն բաղումք, ա՛յնչափ մոլորք, մինչեւ անաշխատ հաց սպասել ի նմանէ. են և ոմանք, ա՛յնչափ պարզամիտք արդեօք . . . , մինչեւ անգիտանալ ամենեւին՝ թէ այլ եւս անցին դարք յորս հնար էր խղճի անհաւատ և անհաւան պառակտութեամբ օտար դռներէ հաց մուրալ անվնաս, և փառք՝ ձրիապէս. մինչեւ չգիտել՝ թէ քաղաքական անկախութիւնը կորուսած և՝ մանաւանդ՝ մեծաւ մասամբ անուսումն և առանց դպրութեան ժողովրդի մը՝ կրօնական սեփհական դրօշին տակ համախմբութեամբ հնարաւոր է պահպանել իւր ազգային ամբողջութիւնն և ազգովին բարդաւաճել. այնչափ անգիտակք արդեօք . . . . , մինչեւ կուրանալ չտեսնել ամենեւին՝ թէ եկեղեցական դրօշին այսպէս ծուէն ծուէն պատառմամբն ազգութեան ոդին ալ ահա այս վիճակին եկաւ հասաւ այսօր, մինչեւ, ո՛վ կրանք և նախատինք ազգիս, բաղմաց «Հայ եմ» ըսելու իսկ խիթալ և ամաչել . . . . ա՛յ ապիրատ առաջնորդք:

Բայց թողումք, տեարք իմ, թողումք այս ազգային դատը ապագային, հանդերձեալ այդ անաչառ դատաւորին թողումք՝ Աստուծոյ առջեւ, խղճի առջեւ, պատմութեան և ողջամտութեան առջեւ, անխորհուրդ հերձուածոց պատասխանատուութիւնը ըսել . . . : Ե՛ս ինքնին, եթէ այսօրեայ առաջադրութենէս շատ հեռի երթալ հարկ չլինէր, ինքեանք զինքեանս առ լուսամիտս ունող կարդ մ'ազատասէրներէ քանի մը քայլ յառաջ ալ պիտի անցնէի, և ողջախոհ ազատամտութեան բեմին առջեւ կանգնած, իբրեւ ազգային իրաւանց ջատագով, ե՛ս ինքնին խղճի և պատմութեան դատաստանէն նոցա դատապարտութեան վճիռը պիտի ստանայի ի տես հանրութեան: — Այլ մի՛ դուցէ ազգասէր ունկնդրացս արդար ցասումը շարժեմ ընդդէմ ազգակործան վտարանդմանց, կը փութամ ահա դարձեալ նոցա հանդարտ և խորին ուշը հրաւիրել յազգն մեր թշուառ. զի տակաւին չա՛տ են մեր ցաւերը:

Կը տեսնեմ ես զազգն մեր ըստ մեծի մասին զուրկ ամենեւին յընկերային և ընտանեկան կենաց ուղղութենէ. ուրեք հասարակաց բարքն զեղծեալ յօտարամուտ նորաձեւութեանց, և այլուր ժողովուրդն դրեթէ վայրենի. ուրեք իբր թէ շարժումն և կենդանութիւն. — թէպէտ յաճախ ի թիւրն և ի չար. — և այլ ուրեք կայութիւն և մեռելութիւն ամենեւին: Այլ և որպիսի՛ ոմանք առաջնորդ և գործունեայ են առ մեզ. — Առաջնորդք ապիրատք, ամենայնի և բնաւից անտեղեակք. դա՛ աւադիկ ուխտաւորք եկեղեցւոյ, փառասէրք . . . , որ ընդ Աստուած և ընդ ինքեանս սրբազան դաշինքը դնելէ յետոյ կը դրժեն իւրեանց նուիրական դաշանց. դա՛ աւադիկ կրօնաւորք, պճնասէրք . . . , որ կը կարծեն թէ ի ձայն սրբահառաչ աղօթից կարեն խեղդել ճշմարտութեան վկայութիւնը . . . , կը կարծեն թէ ամենայն ինչ կարելի է պատրուակել կրօնական վերարկուին տակ. ահա ապիկար քարոզիչք . . . . որ ռամկին տկարամտու-

թեամբը զինեալ՝ ողջամիտ և վսեմախոհ քրիստոնէին դէմ հալածանք կը յարուցանեն . . . . ահա . . . վանականք, որ յանուն ջերմեռանդութեան, յանուն ողորմածին Աստուծոյ՝ խեղճ ժողովրդին յետին նաքարակիտը կը չորթեն, որք ի շինութիւն ազգիս և ի պայծառութիւն եկեղեցւոյ՝ ազգին գանձը կը կապտեն կը թաղեն վանական նկուղներու մէջ. ի՞նչ տարբերութիւն ունին դոքա Աւետարանի այն ծառայէն՝ որ «ի վարշամակի ունէր զմնասս տեառն իւրոյ». ահա վաշխառու քահանայք, որ յանուն բարեգործութեան փոխ դրամ կը ճարեն ձեռարուեստ այրի կնոջ կամ որբ աղջկան՝ նորա միակ համեստ զարդն յաւանդ գրաւելով, և ապա թշուառին ասղնագործ գիշերաջան վաստակոց արդիւնքը գինս տոկոսեաց կ'առնուն կը տանին անգթաբար: Ահա գործունեայք ազգիս, անգիտակք քաղաքական օրինաց և տեսչութեան . . . . դա՛ւաղիկ ազգային վարիչք . . . . անձնահաճք, որ փոխանակ խորհելու ազգին յառաջադիմութեան բարւոք և հնարաւոր եղանակը, հանապազ կագ և վէճ կը ջանան յարուցանել . . . . և անձնասիրութեան զոհ ընել ազգին ժամանակն ու պատիւը. և, իբր թէ ազգին օգուտը մտածող, սկզբանց ու կարծեաց տէր և պաշտպան, կուսակցութիւններ կը կազմեն և այնպէս իւրեանց անմիտ խուժանին գլուխ կեցած՝ կ'ընտրեն և կը տապալեն, և այլ ինչ գիտեն երբէք ոչ: Ահա մեկնակալէն ողորմելի դաստիարակներ, որ զազգիս մանկտին կրթելու և ուսուցանելու պարտաւորութիւն ստացեր են . . ., որք կրթիչ են առանց կրթութեան, ուսուցիչ՝ առանց գիտութեան, կրօնուսոյց՝ և խաւարը կը քարոզեն: Ահա հրապարակախօսք, որ ժողովրդեան ի լոյս ի դաստիարակութիւն առաջնորդ լինելու դիտաւորութեամբ կ'ոստնուն յասպարէզ, և հասարակաց բարուց զեղծիչ կը լինին. յիմարք, որ, իբր թէ բորբոքեալ ձէթը ձիթով մարել հնար լինէր, ստութիւնը ստութեամբ վանել կը փորձեն, կամ կը կեղծեն . . ., որք գիտեն հաճոյ լինել բազմաց՝ առանց սակայն մտաւոր կամ բարոյական օգտի. տգիտութեան և վայրենական բարոյականի քարոզներ են դոքա, որ մոլութիւն կը համարին ինչ որ ուղղութիւն է, և մոլութեանց իբր թէ հարուածիչ՝ և արծարծիչ կը լինին ի ժողովրդեան. ա՛յ չուառք, թօթափեցէ՛ք այլ ևս այդ գձուձ գաղափարներն, այդ խաւարային քարոզու-

թիւնները. վեհ եղէք, վսեմախոհ եղէք, ազնուասիրտ եղէք, լուսաւոր խորհուրդներ ունեցէք . . . . բայց ի՞նչ կ'ըսեմ. հնա՞ր է միթէ աչաց ամաններէ զուրկ եղողէ մը լոյս յուսալ, անմշակ ուղեղներէ արդիւնք սպասել: — Ահա, տեարք, ընկերական աշխարհի մէջ այսչափ ստորին, այսքան անարգ բաժին ունի այն ազգն որ չխորհիր՝ թէ իւր բախտն իւր մանկանց կրթութենէն կախեալ է: —

Բայց մեր ընտանեկան կեա՞նքը. նոյն իսկ Կոստանդնուպոլսոյ շրջանակին մէջ, յորում կը համարին լինել ազգիս լուսաւորութեան կեդրոնը, տեսէք, տեարք իմ, տեսէք, ո՛րչափ յետնութիւն, քանի՛ քանի ստորնութիւնք, որպիսի՛ անտեղութիւնք մեր ընտանեկան կենաց մէջ. Հայ կանայք, — խիստ աննշան բացառութեամբ, — բնաւին անտեղեակ են տնտիկնութեան, առտնին տնտեսութեան և համեստ ու չափաւոր կենաց. զեղխութիւն, տնաւեր շռայլութիւնք և անվայել պճնասիրութիւնք համաճարակ ախտ եղած են առ կանայս մեր. տակաւին մանկական օրօրոցներու քով լուսամիտ մարք յոյժ սակաւաթիւ են, չկան կամ խիստ հազուագիւտ են նոքա որ մայրենի գորովանաց հետ որ բնական է՝ սրտի և հոգւոյ կրթութեան խնամք ալ ունենան իւրեանց մատղաշ զաւակաց վրայ. յաճախ իսկ առ տգիտութեան, առ ցնցոտի մտահաճութեան ծնողաց, տղայք բոլորովին զուրկ կը մեծնան առողջաբանական դարմաններէ, և այսպիսեաւ հայ պատանիք և երիտասարդք մեծաւ մասամբ վտիտ ու վատառողջ, անարիւն և բթամիտ կը լինին. ընտիր առնակին մը մեծ բարեբաստութիւն կրնայ յարդարել իւր աշխատաւոր ամուսնոյն և բարի օրինակ լինել չափահաս զաւակացը. բայց աղէ, ո՞ ոք ի ձէնջ պիտի կարենայ կամ քանի՞ հոգի պիտի յաջողի թուել և ցոյց տալ մեր կանանց մէջ այնպիսի տնաշէն բարեմասնութեանց տէր առնակնայս. — շատ քիչ են, շատ քիչ, մինչեւ իրաւամբ համարել թէ չկան իսկ: Հարք, տեարք իմ, ըստ մեծի մասին անգիտակ են տնական տեսչութեան, ընտանեկան ուղղութեանց, վայելուչ խնայողութեան և քաղաքավարական օրինաց իսկ. գրկողութիւն կարեւորաց, շռայլութիւն առ անպիտանս, տարապարտ նախանձ և ազգի ազգի մոլութիւնք՝ ամուսնաւոր արանց բարքը կը կազմեն առ մեզ. կը սիրեն տեսնել իւրեանց ընտանիքն յամենայնի տգէտ, բնաւից անտեղեակ

և միանգամայն անմոլար ու համեստ . . . , կը կուրացնեն կամ կոյր կը պահեն զնոսա . մթին սենեկաց մէջ կը հրամայեն փակուիլ միայն իրենց կանանց , որպէս զի՝ նման աչափոր աղաւնեաց կամ թէ սագաց՝ պարարին և գիրանան . և ահա այս պատճառաւ խեռութիւն և գժտութիւն պակաս չեն ընտանեաց մէջ , մինչև իսկ յաճախ կ'ուծանան ամուսինք ի միմեանց , ընտանեկան սէրը կը ցրտանայ կը սառի , և ապա ի հարկէ ընդ փոյթ կուգան կը յաջորդեն բաժանումն և եղծութիւնք ։ Իսկ հայ երիտասարդք , խիստ մեծ մասամբ անուսումն և անարուեստ կամ ծոյլ և դատարկապորտ , ոչ ինչ նուազ տխուր մաս մը կը պատկերեն մեր ընտանեկան կենաց տեսարանին վրայ . ցոփութիւն և ծանծաղամտութիւն՝ նոցա զարդարանքն են , բարձրավիզ հպարտութիւն առ անծանօթս , նուաստագոյն և ստորնագոյն հայցուածք յորմէ ակնկալենն , անչափ զբօսասիրութիւն և յաճախ իսկ քմնելի ապականութիւնք բարուց , այսոքիկ են ահաւասիկ մեր երիտասարդաց շատին ընտիր ընտիր բարեմասնութիւնքը . և այսպիսիք հա՛յր պիտի լինին և զաւակ պիտի կրթեն . . . , ո՛վ յետնոյ չուառութեան ազգիս ։ Բայց սակայն մայր պիտի լինին հայ օրիորդք ալ , որոց . — միշտ աննշան բացառութեամբ . — դաստիարակութիւնն ոչ ինչ ընդհատ է կապկական միմոսութենէ , յինքեանց ոչ ինչ կը բղխի , սիրտ չունին , հոգի չունին , պառաւական մտահաճութեամբք շատից ուղեղները շաղախեալ են . և միթէ հնար ի՞նչ է , զի ջղջականն գքանարիկ ծնանի , կամ խլուրդք զարծուիս սնուցանեն ։

Եւ երբ , տեա՛րք , մեր տեսութեան ծիրն ընդարձակելով՝ Կոստանդնուպոլսոյ շրջանակէն դուրս տարածեմք մինչ յայսկոյս ափանց Գանգեսի , և անտի ի խորս Եգիպտացւոց աշխարհին , ի վերնակողմանս Դանուբ գետոյ և ի Կովկասեան դօտիս՝ շուրջ պատեալ զթրքահայս , զռուսաբնակսն և որք ի Պարսից աշխարհին են օտարացեալք , երբ այս ընդարձակածաւալ տարածութեան մէջ , ուր կ'ընթանայ ցայսօր անուն Արամեանցս , մեր ազգին հանրական կենաց պատկերն աչաց առջև կ'ունենամք , կը տեսնեմք մեք զազգն մեր ի բազում տեղիս կարօտ և տառապեալ , նկուն և ընկճեալ , օտարացեալ և ազգային լեզուաւ և ազգութեան ոգւով , մինչև իսկ արևելեան հայք զարևմտեանս չեն ճանաչեր չեն հասկանայր , և հիւսիսաբնակք զհարաւայինս չեն

գիտեր չեն իմանայր , մինչև անգամ շատք խիստ շատք անտեղեակ են բնաւին՝ թէ ո՛ւր և ուր անկեալ վտարեալ են Հայկազունք . — բայց , փա՛ռք Բարձրելոյն , ա՛յնքան ահաւոր դըժբախտութեան թօնընկեցաց ներքև , Հայաստանեայց եկեղեցւոյ դրօշն , զոր ծուէն ծուէն պատառելով յուսացին և կը յուսան , հոգւոյ փրկութեան հետ . . . , ազգային փրկութիւն և բարգաւաճանք , ցայսօր պարզեալ կը ծածանի բարձրաթռիչ . և մինչդեռ ի ձեռն բախտին՝ լերինք և անտառք , աշխարհք և անապատք կ'անջատեն և մասն մասն կը բաժանեն զՀօտն Թադէոսեան , մինչդեռ Հայք լեզուաւ և ոգւով չեն համախմբիր Արարատայ բարձանց շուրջը , և մինչդեռ այլուստ նենգք և խաբէութիւնք կը գործեն անդուլ անդադար , փա՛ռք Տեառն , դեռ ևս ի չորից ծագաց հայկեան աղօթից բազմաբերան մրմունջքն Լուսաւորչի տաճարը կը թնդեցնեն ցայսօր ։ — Այսպէս ահա կը տեսնեմք մեք զազգն բազում ուրեք անպաշտպան և թշուառ , բազում ուրեք նսեմեալ ի խաւարի և ի ստուերս տգիտութեան , ամենուրեք անգործութիւն և կարօտութիւն բազմաց , ամենուրեք յուսակորոյս տագնապ , կռուումն և վհատութիւն ամէն կողմ ։

Բայց ուստի՞ են այս ամենայն , տեարք իմ , առ ի՞նչ արդեօք այսքան նսեմացեր է աստղն Հայկազանց . — գիտեմ , ազգին այսքանոյ յետնութեան իբր պատճառ բազում ինչ ցոյց կուտան ընդհանրապէս , զոր օրինակ՝ ազգը աղքատ է , կարօտ է հացիւ , քաղաքական անկախութիւնը կորուսած է , և այլ նոյնպիսիս . բայց ես , նման զօրաբանակի մ'սպարապետին՝ որ պարտեալ գնդի մը հրամանատարն ի հարցափորձ կոչելով կը հարցնէր նմա՝ թէ ի՞նչ պատճառաւ կորսնցուցիք ճակատամարտը . — Շատ պատճառներ ունէինք , տէր , պատասխանեց զօրապետը , նախ՝ վասն զի վառօդ չունէինք . . . — Բաւական է , կը գոչէ սպարապետը , բաւական , այլ ինչ չեմ խնդրեր . այսպէս և ես , տեարք , այլ ինչ չեմ հարցաներ , դպրոց չունի՞մք . — բաւական է . այո՛ , բան մ'ևեթ կը պակասի մեզ , զի ամենայն ինչ կը պակասին , բան մը միայն չունիմք , և ոչ ինչ ունիմք , դպրոց . այո՛ , տեարք , ամենայնի պատճառ սա՛ է թէ դպրոց չունիմք , և բնաւից դարման ա՛յն է զի դպրոց ունենամք ։ Այնպէս կը նկատեմ ես , տեարք իմ , այնպէս կը խորհիմ թէ չիք և չիք հնար լուսաւորութեան և զարգացման ազգիս , մինչև որ դպրոցներէ չսպասեմք լոյսն ու

զարգացումը, մինչև որ յամենայնի այն խոնարհ յարկերուն չը լինիմք յուսադիր և ակնկալու․ երբ կը մտածեմ ազգին բազմապատիկ թշուառութիւնքը, երբ ա՛յնքանի տարապայման դժբախտութեանց փոթորկին մէջ հազիւ ուրեմն կը մագլցիմ կ'ելնեմ խոհականութեանս գագաթը, և աչերս չուրջ յածելով փրկութեան հնար մը կը խնդրեմ յամենուստ, և ահա մտացս յանդիման ցածուն յարկ մը կը նկարի, դպրոցը․ հո՛ն եւեթ կարելի կը համարիմ զերծուցանել Հայկազանցս նաւը, հո՛ն միայն հնար կը հաշուիմ տանել փրկել լուսաւորչեան Հօտը ։

Կ'ըսեն թէ, ըսի, տեարք, ազգը աղքատ է, հացի կարօտ է․ օ՛ն, ընդունիմք պահ մը՝ թէ յիրաւի աղքատ է ազգը․ բայց միթէ ինձ հետ կ'ընդունի՞ք և դուք այն թիւր կարծիքը՝ թէ աղքատութենէն հետևի կարօտութիւնը ։ Գործեալ, աղքատ է, ըսեմք, ազգը․ այլ ոչ եթէ՝ վասն զի աղքատ է՝ կարօտ է, այլ կարօտեալ է, վասն զի անգործ է, անուսումն անարուեստ է․ այսոքիկ են ըստ իս ազգին կարօտութեանն իսկական պատճառք ։ Եւ միթէ աղքատութիւնն արգե՞լ ինչ է զարգանալ մտաւորականին․ բայց, տեարք, ուստի՞ պիտի բղխէր ազգին նիւթական մեծութիւնը․ — պատմութիւնն ցոյց տուաւ մեզ՝ մտաւոր և բարոյական մեծութեամբ նիւթական մեծութիւն, այլապէս չէք հնար․ ուստի՞ ուրեմն պիտի բարգաւաճի ազգը նիւթապէս․ և երբ շատք ազգին նիւթական մեծութեանը կ'սպասեն, նման անմիտ չինականին որ, գետէ մ'անցնելու համար, բոլոր ջրոց սպառելուն կ'սպասէր, որպէս զի այնուհետև մտաւորականին ևս ջանան և վաստակին, այնինքն՝ երբ շատ գործունեայք՝ առանց մտաւոր զարգացման նիւթապէս զարգացումն կը յուսան, կամ առանց պատճառի արդիւնք կ'սպասեն, աւելի բանաւոր չլինի՞ր միթէ, զի մտաւորէն նիւթականն յուսան, հնարաւորը խորհած չե՞ն լինիր արդեօք, զի պատճառէ արդիւնք սպասեն, և ոչ յարդեանց՝ պատճառ ։ Պատմական անժխտելի կրողութիւնք նո՛յնպէս չապացուցի՞ն մեզ, ուղղամտութիւնը նո՛յնը չհա՞ստատեր միթէ ։ Բայց ա՛ռ որո՞վ համեմատութեամբ ազգը աղքատ կը համարին․ — ո՞չ ապաքէն առ եւրոպական ազգաց․ խիղճս և միտքս կը վկայեն միաբան՝ թէ մտաց աղքատութեան արդիւնք է այնպիսի համեմատութիւն մ'ընելը ։ Բայց եթէ կան այնպիսիք որ այլապէս մտածեն և յայլուստ երեւցնեն ազգին աղքատութիւնը,

վանքերը ցոյց կուտամ նոցա, մեծատուններըը կը ցուցնեմ նոցա մատնանիշ ։

Կ'ըսեն թէ, տեարք, քաղաքական անկախութիւնը կորուսած է ազգը․ բայց ի՞նչ փոյթ մեզ անտի, աշխարհաքաղաքացի լինելու մխիթարութիւնն ունիմք այսօր, ժամանակն և պարագայք ուսուցած են մեզ արդէն հաշտ ունել հայրենասիրութիւնն ընդ հաւատարիմ հպատակութեան, աստի մեզ զի՞նչ արգել ի մտաւորական յառաջադիմութիւն․ և միթէ նուա՞զ յուսալից է այն խոստումն զոր ապագայն կը խոստանայ քաղաքակրթելոց ․ ․ ․ ․ ։

Ո՞ւր կը մնայք մեք յայնժամ ․ ․ ․ ։

Ո՛չ, տեարք իմ, ոչ․ այս ամենայն հիւանդ գլխոց սնոտի պատճառաբանութիւնք են, « անհաւատ և դանդաչանաց բանք տխմարաց մտաց կարկառեալք », և ոչ այլ ինչ․ մեր ազգին համար եթէ փրկութեան հնար մը կայ, այն ալ դպրոցն է․ ազգային կեդրոնական բարձրագոյն ուսումնարան մ'ունենամք ի Կոստանդնուպոլիս, օրինաւոր վարժապետանոց մը դարձեալ ի Կոստանդնուպոլիս, քանի մ'արուեստանոց, բայց մանաւորապէս տասնի չափ երկրագործական վարժարաններ ի Բարձր Հայս, ի Վասպուրական, յԱյրարատ, ի Փոքրհայս, ի Կապադովկիա, ի Կիլիկիա, ի Ռուսաստան, յԵգիպտոս և այլուր, բաւական է, ազգային յառաջադիմութեան դարմանումն հասած է յայնժամ․ ուսուցանեմք նոր սերունդը, ուսուցանեմք Հայ մանկան ազգին կրօնքն, ազգին լեզուն և պատմութիւնը լուսամիտ և հմուտ ուսուցչաց ձեռօք, շա՛տ է, յայնժամ հորդած պիտի լինիմք մեր առջեւ ճշմարիտ քաղաքակրթութեան ճանապարհը ։ Չե՞մք գիտեր միթէ, քանի մը որբազան աշխատաւորք, ի սկզբան անդ Ե․ դարու, Հայկեան ալփաբետը հնարեցին, և, իբր յիսնամեայ ժամանակի մէջ, հայկական գրաւոր պանծալի բարբառը բերին ընծայեցին ազգին՝ հինաւուրց ժամանակաց ծոցէն․ չե՞մք տեսներ միթէ, երկու հոյակապ դպրոցք դարուս մէջ նոյնը կը մաքրեն կը սրբեն ի դարուց խանգարմանց, և վերստին ոսկեղինիկ ժամանակին ազնուութեանը կը բարձրացնեն զայն տակաւ ։ Այսպէս ահա, տեա՛րք, ամենազգի բարձրութիւն դպրոցական յարկերէ կը բղխին ։

Ժամանակն եկած հասած է այլ եւս, տեարք, զի ազգը իւր խորին ուշն այս հարկաւորագոյն խնդրոյն վրայ դարձնէ, ժո-

ղովուրդն իւր առաջին լուսոյն կրթութեան դանձանակը ձգէ. մեր ազգին հանդերձեալ բախտը մեր մանկանց այժմու դաստիարակութենէն կախեալ է, պատմութիւնն առ այս վկայ եղաւ մեզ։ Ժամանակ է այլ եւս, ո՛ լուսամիտ կղերականք, զի ձեր սրբազան ազդեցութեամբն միշտ և հանապազ դրդէք վառէք ժողովուրդն այս կարեւոր և ազդաշէն գործոյն. արժան է, ո՛ դրագէտք, զի ձեր մտաց բոլոր աշխուժիւն խոնջիք տքնիք ազգային տղայոց կրթութեան համար. արժան է, ո՛ զդօն հրապարակախօսք, զի զօրհանապազ ձեր թերթերուն մէջ քանի մ'էջեր նուիրէք մանկանց դաստիարակութեան. արժան է, ո՛ լրջամիտ գործունեայք, զի յառաջ քան զամենայն և առաւել քան զամենայն՝ կրթութեան խնդրոյն վրայ խորհիք, խօսիք և գործէք արիաբար. ժամ է արդ, ո՛վ վարիչք ժողովրդեանս, զի վանական և եկեղեցեաց նկուղներուն մէջ ազգին թաքուցեալ քանքարաց իշխէք այլ եւս, և՝ նման հաւատարիմ ծառայից՝ վաշխէք տոկոսէք զնոսա խնամատութեամբ և տայք տասնապատիկ հարիւրապատիկ շահել տեառն ձերում. ժամ է արդ, ո՛վ մեծատունք, զի դէթ ձեր սեղանէն անկեալ փշրանքն հայ մանկանց կրթութեան նուիրէք. պարտ է և ձեզ, ո՛ հարք և մարք, զի նախ քան զամենայն ինչ փոյթ ընէք ձեր զաւակաց դաստիարակութեան, առաւել քան զամենայն պիտոյս՝ զդացուցէ՛ք ձեր որդւոց կրթութեան պէտքը, յառաջ քան օժտելու զաղջկունս ձեր՝ օժտեցէ՛ք զնոսա մտաւոր և բարոյական զարգացմամբ։

Ա՛յսպէս, և ոչ այլազգ, պիտի սկսի ազգային յառաջադիմութեան գործը։

23 Մարտ 1875
ի Կոստանդնուպոլիս

Հ

ՎԱՐԱԶԴԱՏԵԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Այս Ընկերութեան նպատակն է կիրակօրեայ դպրոցներ, լսարաններ և ընթերցարաններ ունենալ ամեն Հայաբնակ տեղեր։

Սոյն վսեմ նպատակին համար ազգէն քաջալերուելու վստահ՝ հրաւէր կը կարդայ ամեն Հայաբնակ քաղաքներու և գիւղերու որ Ընկերութեանս ճիւղեր կազմելով միանան իւր հետ և գործակցին ազգային յառաջադիմութեան հանրական շարժումը տալու։

Գործադիր ժողովը իւր հետ յարաբերութեան մտնել ուզողներուն պատրաստ է ղրկել իւր կանոնագիրը և հարկ եղած հրահանգները։

Գին 2 ղուրուշ.

Ի նպաստ Վարազդատեան Ընկերութեան

4525-4526

2013

<< Ազգային գրադարան
NL0031474

<< Ազգային գրադարան
NL0031473

<< Ազգային գրադարան
NL0031466

<< Ազգային գրադարան
NL0031472

<< Ազգային գրադարան
NL0031465

<< Ազգային գրադարան
NL0031471

<< Ազգային գրադարան
NL0031464

<< Ազգային գրադարան
NL0031470

<< Ազգային գրադարան
NL0031463

<< Ազգային գրադարան
NL0031469

<< Ազգային գրադարան
NL0031475

4374 77 80 83
75 78 81 84
76 79 82